զԴանիէլ եւ զում արհամառու մերձաւորսն եւ զիս զփծուն գրիչս եւ զծնօղս մեր՝ յիշեսջիք ի սբ յաղաւթս ձեր աղաչեմ։ /

942. Արդ (յեր)ես անկեալ աղաչեմ սբ ընթերցողք՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք զմեզ ի (քն ? — չկայ) զվերոյ գրեալս առհասարակ եւ զմիեղէն սբ եղբարքս, զմիաբանքս սբ Ամենափրկչիս զտր Սարգիս փակակալ, զտր Յակոբ, զտր Մաթէոս եւ զսիրասնունդ որդիքս մեր եւ հոգելից աշակերտքս կուսակրաւն սբ քհնայքս, զկազմաւղ սորա զտր Յակոբ եւ զտր Յոհննէս, որ .... (չի կարդացվում երկու բառ) ունինք սիրով եւ հնազանդութբ, զտր Անդոն, զտր Աւետիք, զտր Դաւիթ, զտր Ղազար, զտր Ղուկաս, զտր Մանուէլ. զտր Աբրահամ եւ զմմ առհասարակ, զմեծ եւ զփոքր եւ զերախտաւոր հայրն իմ զփոխեցեալն առ քն Յվս, որ բազում աշխատութբ զթուխտըս (s!) կոկեաց, վասն յիշելոյ աղաւթից՝ ած ողորմի իւրեն եւ մաւրն իմոյ Էմինին, որ բազում չարչարանաւք, յուսով եւ սիրով եւ անչափ տառապանաւք ծառայեաց ինձ. քն ած միոյն հարիւրապատիկ հատուցանէ իւրենն. եւ ընդ կանանցն իւղաբերիցն դասակից եւ պսակից (s!) առնէ եւ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոց ողորմեսցի քն ած։ Ամէն եղիցի։

Աղաչեմ զձեզ եղբարք որ անձանձիր եւ անխափան զյիշատակս սբ գրոցս կատարէք Ծրագալուցին կամ Յովհաննու տաւնին անբիծք. չարական, ածանեղ եւ աւետարան կարդան, եւ լի բերանով ած ողորմի ասցէք (s!) եւ խնամով պահէք եւ ջուխտ մեզարով, ի ձէթէ եւ ի տինէ (?) պատրաստ պահէ։

## 7.

## N 251 (Կ. 244) ավետարան բոլորգիր գրիչն է Ստեփանոս մահդասի 94ա

239ա. Զփծուն գրիչս եւ զմեղաւք ծերացեալ մահդասի զստեփնս յիշման արէք (s!) արժանի։

308ա. Փառք համագոյ անբաժանելի եւ միասնական սբ երրորդութեն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։ //

308բ. Որք զմտաց աչս անաղաւտ եւ վճիտ ունիցի երկնա . . . (?) գլտամամբ (s!) առ էականն լոյս։

Սովորութի է ածային արանց միշտ եւ հանապազ խոկալ յածային պատուիրանս ի տվէ եւ ի գիշերի միշտ վերինն խորհել ուր քն նստի ընդ աջմէ այ եւ բազում պատճառի բազումք փափաքին ջեռմեռանդ սիրով եւ ըղձալի ցանկութբ արդիւնս եւ գործս կատարել, որպէս եւ հրամայեաց տրն. գանձեցէք ձեզ գանձ յերկինս որ ոչ ցեց եւ ուտիչ ապականեն եւ ոչ գողք ականհատանեն եւ գողանան։

Արդ եղեւ գրաւ գրչութե այսմ ածաշունչ աւետարանիս. ի թվ. հայոց՝ Ջ եւ Ի. եւ ի վշտաշատ ժամանակի, ի խանութե ուզուն հասանին եւ ի հայրապետութե տն՝ տր ըստակէս կթղի // ի սբ յաթոռն էջմիածին ի յերկնահանգէտ եւ ի սբ ուխտս հայոց բառ սբ ամենափրկչիս որ է պատկեր տն մերոյ յի քի, որ է օրհնեալ յաւիտենս յաւիտենից ամէն։

## 8.

## Ձեռ. էջմ. N 925 (Կտուց N 20). Նց.

Փառք համագոյ եւ միասնին սբ երրորդութին անբաժանելիս երիկ անձնաւորութեն եւ միակ բնութեն հաւր եւ որդւոյ եւ հոգոյն սրբոյ յաւիտենս յաւիտենից ամէն։ Որ ետ հասանել ինձ յախմար եւ սխալագիր գրիչս Գրիգոր անուամբ միայն եւ ձեւով եղակի կրօնաւոր կոչցլոյ յաւարտ տումրին մեկնութես (Յակոբ Ղրիմեցու) ի յուրխութին ուսումնասիրաց անձանց եւ պհլ անսխալ ըղլրումն տօնից տէրունականաց զատիկն եւ զայլսն։

Արդ սկիզբն սր եղեւ ի յանեղաշէն եւ ածաբնակ գեաւղն Քանաքեռ եւ կտրումն եղեւ ի մեծ մենաստանիս Հայոց Թառա', ընդ հովանաւ Ամենափրկչին եւ սր Աճանին եւ ի յայլ սրբութեցն, որք աստ կան հաւաքեալ. գրեցաւ գիրքս ի թվկնիս հայոց ՌՂԲ։ Եւ սկիզբն գրոյս եղեւ յուլիս Ա եւ կտրմն աւգոստոս լա. յաղագս վայելման անձին իմոյ եւ մերոյ յետոյ եկելոց։

Արդ գրեցաւ ի հայրապետուե ազգիս Հայոց տն Գրիգորի եւ յարհի եպկպսութեն մեծ նահանգիս Արարադեան տր Ստեփանոսին